

ժելթներեակներէ ըստանման տեղում: Խորանները զարդերի պէս ներկայացնում են ամենատարբեր ձևեր: Ոսկին քիչ է գործածած և այնքան էլ փայլուն չէ:

Գլխաւոր Յիշատակարանի կորստեան պատճառով ձեռագրի գրութեան տարին և տեղը որոշել չենք կարող: Գաղիկը Կարոսի թագաւորել է մինչև 1064 թիւը. կարող է մինչև այդ ժամանակը և Կարս քաղաքում գրել տուած լինի. բայց անհաւանական չէ, որ ձեռ. պատրաստել է տուել Փոքր Հայքում, իւր բնակութեան նոր միջավայրում, ուր զրկուած դրական իշխանութիւնից, կրօնաւորական հակումներով աւելի էր արամադրուած: Չեռ. արուեստի ծագումը ճշգիւ որոշելու խնդրում նրա գրութեան տեղը խիստ կարեւոր է: Հայկական մանրանկարչութեամբ պարագողը յատուկ ուշադրութեան պիտի առնի Գաղիկ Ա. առանձնապէս, երբ իւր ուսումնասիրութեան խնդիր զարծնի զարդադրերի կամ կենդանադրերի վրայ: Այս ձեռ. մեր առաջ ունինք դեռ ևս այն շրջանը, երբ տառը զարդարող մարդու, թռչնի կամ կենդանու նկարները միացած են իրար հետ պարզ գծերով, տառն ու կենդանին իրանց իսկական կերպարանքով:

Միտոսպ եպիսկոպոս.



Բ Ա Դ Ա Գ Ի Խ Ղ Ի Ը Խ Ե Ր Ո Ւ Մ Ը

Բ.

1905 յուզիչ բուականը, նախապատաստութիւններ. Բեօուզ Աղայ Կարաբեգովի այցը Բաղային. Ալլահեար բեգ Զուլղազարովը եւ նրա նասաակաց դիրքը:

1905 թուի փետրվարեան արեւնահեղ ընդհարումն թուրքերի և հայերի միջև Բագուում հայ կեանքի մէջ յեղաշրջումն առաջացրեց, և այդ թուականը Անդրկովկասեան հայ ազգաբնակչութեան համար մի յուզիչ և ցնցող տարի էր: Հասարակաց կեանքը գիւղերում և քաղաքներում աննկարագրելի շարժման մէջ էր. մանաւանդ գիւղերում բնակչութեան երիտասարդ մասը արթնութեան մէջ էր: Ապագայի և այն մօտիկ ապագայի վերայ նայում էր խիստ խոփոռադէմ, սպասում

էր մըրկայոյզ փոթորկի, որի խոտութեան աստիճանը գեռ
ևս մութն էր, խաւար էր նրա համար իբրև մշուշով ծած-
կուած տեսարան:

Ուստի նա, այդ երկտասարդ մասը, անդադար երերման
մէջ, ժողովներ էր կազմում իւրաքանչիւր գիւղում, խորհրդ-
դակցութիւններ էր կառարում, պատրաստութիւններ էր
տեսնում, ղիմադրելու թուրքերի յարձակմանը, որ վաղ թէ
ուշ տեղի էր ունենալու, որով գոյութեան ու պատուոյ խըն-
դիւրը պէտք է առաջ դար և լուծուէր: Նա պատրաստում էր
կարծես զոհելու իւր կեանքն անգամ այդ գոյութեան և պա-
տուոյ համար, որպէս զի ապացուցանի, թէ հայ ազգը այնպէս
էլ թուլամորթ ու վախկոտ չէ, ինչպէս ուրիշները կարծում են.
ցոյց տայ՝ որ եթէ մի ձեռքով գութանի մաճն է բռնում, գիտէ
ու ընդունակ է միւս ձեռքով իրան պաշտպանել:

Սակայն տեսածներէս և գիտցածներէս նայելով՝ ինքնա-
պաշտպանութեան համար մտածող այդ մարդիկ մտքներով
չէին անցկացնում թուրք հարեանին դարեւոր ռիսերիմ՝ թշնամի
կարծել և ձգտել նախայարձակ լինելու:

Ես ինքս անձամբ տեսել եմ երկու անգամ այդպիսի միա-
համուռ և համագիւղական ժողով և խորհրդակցութիւն որ ցե-
րեկով՝ քացօդեայ դաշտում: Այնպէս էր զգաստ և լարուած
տեսածս գիւղական ժողովուրդը, որ եկեղեցու երկու երեք
անգամ անկանոն (ոչ որպէս ժամահրաւէր) քաշած զանգի
ձայնը լսելով՝ իսկոյն հաւաքուում խմբուում էր, գիւղի հեռաւոր
և մօտաւոր անկիւններից դէպի որոշեալ ժողովատեղին... ուր
խօսակցութիւնը պատուում էր միայն և միմիայն կազմ և պատ-
րաստ լինելու ինքնապաշտպանութեան համար . . . :

Սակայն հասակաւորներից կային այնպիսիներն, որոնք շատ
բանի անգիտակ՝ տհաճութեամբ էին նայում այդ իրարանց-
ման վերայ, նախատում ու պախարակում էին երիտասարդ-
ների այս իրարանցումն. դրանք մինչև անգամ արդէլք
էին հանդիսանում նախապատրաստութեան դիմողներին, հա-
ւատացնելով՝ որ 1825-27 թուի ռուս-պարսկական պատերազ-
մից դէսը, քանի որ ռուսը տիրում է այս երկրին, լսուած ու
տեսնուած բան չէ, որ տարբեր ցեղերի ժողովուրդները հա-
մարձակութիւն ստանան որ ցերեկով ձեռք բարձրացնելու իրար
վերայ. սակայն այդ թերահաւատներն անգամ, նոյն իսկ հա-
կառակ իրանց կարծիքին գիտէին և տեսնում էին, որ թուրք
ազգաբնակիւթիւնը փոխել է իւր յարաբերութիւնը հայերի
հետ, մի տեսակ խորթացել է, հեռացել է աշնայութիւն-
նից, և ի բնէ զինուած լինելով՝ աւելի է զինուում:

Այս հասակաւորները դիմադրելու պատրաստութեան համար նիւթահան օժանդակութիւն զլանում էին, ոչ թէ ժլատութեան պատճառով, այլ որ հաւատ ունէին, թէ մի կողմից կառավարութիւնն ու միւս կողմից կալուածատէր Ալլահեար բէկ Զուլգաւարովը չեն թոյլ տալ, որ թուրքերը յարձակուով դորձեն:

Տարաբաղդաբար Բաղայի պատրաստութիւնը կիտատ էր, չկար միութիւն, չկար մի զօրեղ անձն, որ կարող լինէր գործի գլուխ կանգնելով միացնել բոլոր ուժերն ու խիտ կարգի տակ դնէր բոլոր հասարակութիւնը... Այս լարուած դրութիւնը տեսնելով երիտասարդները, որոնցից ոմանք անձամբ տեսել էին Բաղուի փեարվարեան և օգոստոսեան սարսափները, հետեւելով չարդախութեցոց օրինակին՝ պատրաստ լինելը անհրաժեշտ էին համարում: Բայց Զուլգաւարով Ալլահեար բէկը Բաղացիներին հանդատացնում էր ասելով. «Քան իմն է, Բաղան ձեռքիցս չեմ գցիլ, Բաղացիներն իմ հարադատներն են, օտար մարդ չի վատահանալ մօտենալ նրան և այլն»: Սոյն այս Ալլահեար բէկը 1905 թուի սեպտեմբերի 11-ին, Ղազախի դաւառապետ Ա. Բ. Նուրիի մօտ, ճաշկերոյթի կենացների ժամանակ, հաւատացրել էր գաւառապետին, որ իրանք բէկերը չեն թոյլ տայ, որ Բաղայի շրջակայքում ընդհարում առաջանայ*:

Տաք գլուխ երիտասարդները լսմբերը, «դաշնակցական» անունի տակ, որ շատ տեղ յառաջընթաց էին լինում գիւղական հասարակութիւնների մէջ, կազմակերպում էին նրանց, ծրագրեր էին տալի ու ղեկավար էին հանդիսանում, ընդհակառակը Բաղայի վերաբերութեամբ մեծ անհողութիւն էին ցոյց տալի: Բաղան թողել էին տեղական բնակիչները կամքին: Նրանք միայն մի անգամ երեւցին, մի ցոյց արին և ապա անդառնալի անհետացան:

Այդ 1905 թուի Օգոստոսի կիսին էր. մի խումբ տաք գլուխ երիտասարդներ, իրանց լսմբապետով եկան Բաղայ, երեք օր մնացին, լաւ լաւ պատիւներ ստացան, շրջապատեցին իրանց Բաղայի երիտասարդներով ու պատրաստում էին անցնել Ղազախի գաւառի Շամշադին գաւառամասի Ղուլալի գիւղը: Բայց նախքան Բաղայից հեռանալը այդ երիտասարդները չտանելով հարեան գիւղերից եկած երեք թուրքերի ներկայութիւնը, կամ գուցէ համարելով նրանց լրտես, որ զննում էին իրանց շարժումները, գիւղից դուրս հանեցին:

Հաւանական է, որ այս երեք թուրքերն արդէն մինը հաբիւր շինելով, սկսեցին պատմել թուրք հասարակութիւն-

* Արշալոյս • 1906 Սիւ Ռ 44.

ների առաջ իրանց տեսածները, եկեղոր երիտասարդների և տեղական խումբերի պատրաստութիւնը: Իսկ եկեղորները տեղական երիտասարդների հետ կազմելով 80 հոգուց պատրաստ մի խումբ օր ցերեկով, պատերազմական կարգով շարժուեցին դէպի Շամշադինու Ղուլալի գիւղը, և անցնելով Բագլի գ կոչուած գիւղից, ուր սուրում են Զիւլքատարով եղբայրներն ու նրանց ազգականները, Աղբուլաղ թուրքաբնակ գիւղի գիմացը մի բլուրի գագաթից 2—3 անգամ համազարկ տուին օդում, և յետոյ գնացին Ղուլալի, իսկ Բագլացիները վերադարձան իրանց գիւղը:

Կասկած չկայ, որ այս ցոյցը գիտաւորեալ էր և արդէն տարածուեց թուրքերի մէջ, որոնք աւելի սկսեցին վերահսկել հայերի շարժմանը, գոնէ այդպէս են կարծում հայերը, ըստ որում այս դէպքից յետոյ, այլ ևս ոչ մի թուրք չէր երևում Բագլայում: Մի քանի օր անցած, երբ գիւղի եկեղեցում Յարութիւն Խալաթեանի ննջեցեալների յիշատակին պատարագ էր մատուցուում և այդ օրը ժամարար քահանան բեմից պէտք է կարգար Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակը և Կովկասի Նէյխիւլ-Իսլամի յորդորը՝ որ հայ ու թուրք հաշտ ապրեն միմեանց հետ, յանկարծ մտաւ եկեղեցի ու կանգնեց առաջին դասում, շքշարպատուած իւր 10—12 թիկնապահ թուրքերով տեղական կալուածատէր Եօխարի Այիւլուեցի հայախօս Բէօուզ աղայ Կարաբէգովը, 52—55 տարեկան մարդ, որին պատուելու համար իսկոյն առաջարկեցին աթոռ և նա բազմեց հայ եկեղեցում սուրբ պատարագի ժամանակ:

Ժամարար Մեսրոբ քահանան կարգաց Վեհափառի կոնդակը և ապա Նէյխիւլ-Իսլամի յորդորը, բացատրեց նրանց միտքն ու նպատակը նախ հայերէն և ապա թուրքերէն, որ հասկանալի լինի Կարաբէգովի ուղեկիցներին: Եկեղեցուց դուրս Կարաբէգովը շնորհակալութիւն յայանեց քահանային և ապա ինքն էլ խաղաղասիրական յորդոր կարգաց ժողովրդին ու քահանայի և ժողովրդի հետ իւր թուրքերով հանդերձ հրաւիրուեց Յարութիւն Խալաթեանի տունը հացկերոյթի, ուր նա նստեց հայերի հետ մի սեղանի և կերոււ անխտիր, իսկ միւս թուրքերի համար առանձին սշխար մորթեցին և առանձին ճաշ պատրաստեցին: Այստեղից Կարաբէգովն իւր խմբով անմիջապէս գնաց Ալլահեար բէգ Զիւլքատարովի մօտ, որ ընակուում է Բեշեշ-քեանդ թուրք գիւղում, իւր սեպհական տանը, Բագլայից 5—6 վերստ հեռու դէպի հարաւ:

Բէօուզ աղայի այցը հայերը ընդունեցին իբրև մի միջոցի մօտոյ ծանօթանալու հայերի արամադրութեանը երիտասարդ-

ների խմբի երևալուց յետոյ և տեսաւ միայն բարեացակամ վերաբերմունք: Գաւառական ստիկանական պաշտօնեաները, երիտասարդների խմբի յայտնի ցայցից յետոյ շուտ շուտ խուզարկութիւններ սկսեցին անել Բաղայում և զէնքեր էին պահանջում. բազացիք ազատուելու համար հաւաքեցին մինչև 25 հին ձեի հրացան և յանձնեցին պրիստաւին, որի բնակութիւնը Գեօօրացում է, 30 վերստ հեռու Բաղայից:

Բաղացիք դրոնց զէնք կամ այլ պատերազմական մթերքներս բերել անկարող էին. որովհետև Բաղան շրջապատուած է բազմաթիւ թուրք դիւղերով. ամենամօտիկ հայաբնակ գիւղը Չարգախլուն է, որ ունի 20 վերստ երկաթուղու Չագամի կայարանը 14—15 վերստ հեռու են: Խօյ շրջապատի թուրք ազգաբնակութիւնը խիստ աշաւրջութեամբ վերահսկում էր՝ որ դրոնց զէնք չմտնի Բաղայ գիւղը:

1905 թուականի հոկտեմբերն էր: Հասարակութիւններէ մէջ բերանից բերան թռչող սուտ կամ ուղորդ լուրերով լցուել էր օդը և մարդկանց դադար ու հանդիսա չէր տալի: Այս և այն տեղ խմբուած մարդիկ խօսում էին միայն օրուայ անցքերի վերայ, թուրքերի պատրաստութեան վերայ, աւազակների շարժման վերայ, այլ նիւթ չկար խօսելու: Մի տեսակ անորոշ դրութիւն էր ստեղծուել բազացոց համար, էլ չգիտէին, թէ ինչ գալոց է պատրաստուած նրանց գլխին. Այ մի գործ չէին կարողանում կատարել, ոչ մի տեղով չէին կարողանում հեռանալ, գիշեր ցերեկ անդադար մտածելուց քունն աչքներից կորել՝ հեռացել էր: Ամեն տեսակ լուրեր, յուսալի թէ յուսահատ, մինը 20 շինելով հաղորդում էին իրար և անորոշ դրութիւնն աւելի բարդւում, զարգանում էր...

Անցաւ հոկտեմբերը. հասաւ նոյեմբերը. մարդիկ աւելի ջղայնացան. լուրերը բարդուեցին և բնակիչները երբեքում էին յուսոյ և յուսահատութեան մէջ: Ոմանք հաւատացնում էին, թէ բարեխնամ կառավարութիւնն երբէք չի թոյլ տալ ընդհարում: Ոմանք և գուցէ մեծամասնութիւնը, լիովին ապաւինել էին Ալլահեար բէգ Չիւլպագարովին և հաւատացած էին, որ սա անթիւ կապերով կապուած Բաղայի հետ, երբէք չի թոյլ տալ, որ իւր հաւատակիցները որ և է վնաս հասցնեն հայ հաւատարիմ գիւղին. Մի այլ խումբ՝ յոյսը չկորցնելով սրանից կամ նրանից, աւելի յոյս էր գնում իւր վերայ, իւր ոյժի ու կազմակերպութեան վերայ...

Չիւլպագարովները մեծ և բազմանդամ տոհմ են, որոնց պարագլուխն է Ալլահեար բէգը: Սա իւր գերդաստանով բնակ-

ւում է Բաղայից 5 վերստ հեռու, հարաւ, Խըննալու գիւղի Գեշիշ-քեանդ մասում, իսկ միւս Զիւլգագարովները, նոյնպէս Բաղայից ոչ հեռու 4—5 վերստաչափ կազմել են մի առանձին գիւղ միմիայն բէգերից բաղկացած և այդ պատճառով կոչւում է Բագլիգ: Նրանք հարուստ կալուածատէրեր են, ունին հողեր, անտառներ Զագամ գետի հովտում և այլն:

Սլլահեար բէգը 60—62 տարեկան է, բարձրահասակ, լիքը, առողջակազմ, հաստ և երկայն քթով, դեղնականաչ փայլուն աչքերով, սակաւախօս, ձախ ոտից փոքր ինչ կադ: Հազնում է սովորաբար շերքեղի երկայն կապայ. (շերքեղկա) վրայից սակապատ քամար և արծաթապատեան խէնչալ, սիրում է որսորդութեան գնալ բարակ շներով (թաղի) և բաղէով. ձանապարհ գնալիս շրջապատում է իրան միշտ թիկնապահներով: Պրագէտ է ուսեբէն, և պարսիկէն, հասկանում է հայ լեզուն: Նրա ազգեցութիւնը առաւել ևս մեծանում է նրա պաշտօնական գիրքով և այն յարաբերութեամբ, որ ունի բարձրատիճան պաշտօնեաների հետ:

Լայնատարած արօտատեղեր ունենալով՝ պահում՝ գարգացնում և կատարելագործում է ձիանց լաւ տեսակներ, և որանցով շատ անգամ փայլում է հասարակաց կրկէսներում և նրա լաւ տեսակի ձիաները շատ անգամ տանում են առաջնակարգ թանկագին մրցանակներ:

Փանձակի նահանգում առաջուոր բէգերի շարքումն է և, իբրև ազգեցիկ մարդ, մեծ համարումն ունի բէգերի և հասարակ դասակարգի մօտ: Հասարակաց գործերին և շարժմանը կարող է ցանկացած ընթացքը տալ:

Սլլահեար բէգի տեղական ազգեցութիւնն այնքան մեծ է ժողովրդի վերայ, որ թուրք և հայ հաւատարապէս հնազանդւում են նրան: Եւ նրա կալուածում ապրող թուրք գիւղացիները կամովին կատարում էին այնպիսի պարտականութիւններ, որից ազատ պէտք է լինէին 1861 թուի փետրվարի 19-ին ազատական բարձրագոյն հրովարտակով:

Բաղացիները, որ օգտւում են պետական հողերով և ոչ մի կապ չունին կալուածատէրերի հետ, չէին կարող գուրս գալ Սլլահեար բէգի համատարած ազգեցութեան տակից: Վարի, հնձի, խոտհարքի ժամանակ հով էին անում (կոչ) բէգի կողմից և տունը մի մարդ մի օր գնում՝ աշխատում էր Սլլահեար բէգի հողերում: Հարուստներն ու արտօնեալները (քահանայք և ըն.) վարձում էին իրանց փոխարէն մարդիկ և ուղարկում էին բէգի հովին մասնակցելու: Բէգի կողմից նշանակած վերահսկիչները միշտ ծանուցում էին տալի բէգին, եկողի ու

չեկողի մասին, չեկող չէր լինում, որովհետև բոլորն էլ համոզուած էին, թէ երբ և իցէ կարիք կունենար բէգի մօտ, ըստ որում բէգը ամենի կարիքը գոհացնում էր. մէկը դրամի պէտք ունի, մի ուրիշը վէճ, կամ ստանալիք ու չէ կարողանում ստանալ, կամ փորձանքի է հանդիպել, ուրեմն պաշտպանութիւն է որոնում իշխանութեան առջ բէգի միջնորդութեամբ. մէկին ապրանքն է գողացուած, բէկը հնարաւորութիւն ունի գողունքը գտնել տալ և յանձնել տիրոջը և լին: Մահմետականներին համար մզկիթները և նշանաւոր օջաղները անձեռնմխելի ապաստարաններ են. Ջիւլիպազար բէկերի տունը որպէս օջաղ ապաստարան էր հալածուածներին համար, լինէին դրանք յանցագործներ, աղջիկ առեւանգողներ կամ բազմաթիւ հալածուածներ:

Այս իրողութիւնը հին է, պատմական է ու յատուկ է շատ բէգերին և խաներին Անդրկովկասում, որով և պաշտպանուում է բէգերի հասարակաց ազդեցութիւնը:

Երբ կառուցւում էր Թիֆլիզ-Բագու երկաթուղին, երկու կայարանի-Ջաղիամ և Դալար տարածութեան փայտէ ձողերը (չպալները) կապալով վերցրել էր Ալլահեար բէգը իւր անտառից մատակարարելու: Բագուցիք և միւս գիւղերի թուրք բնակիչները յօժարակամ իրանց ազրանքով երկու օրով անտառից փայտ էին հասցնում երկաթուղի:

Այսպէս էր Ալլահեար բէգի անսահման ազդեցութիւնը երկու ազգաբնակչութեան վերայ էլ ու այս կարգերը հայերի վերաբերութեամբ թագաւորում էին նախքան Բագայի աւերումը:

Եթէ Բագայի հայ ժողովուրդը միշտ տրամադիր էր գործ դնելու բէգի օգտին իւր պատրաստականութիւնը, հնազանդութիւնը և աշխտատանքը, ապա ուրեմն նա հիմ չունէր երկբայելու, որ իւր պաշտպանը, հովանաւորը, աէրը, իշխանն Ալլահեար բէգն է, որ անկեղծ են նրա խօսքերը թէ «Բագան իմն է, Բագան՝ ձեռքից չեմ թողնիլ, բագացիք հարազատներս են և լին». ուրեմն նա, դոնէ իւր օգտի համար, չի թողլ տալ, որ Բագայի կողոպուտն ու աւերումը տեղի ունենան:

Ամէն անգամ, երբ Ալլահեար բէգը գալիս էր Բագայ կամ անցնում էր նրա միջով, միշտ իջեւանում էր իւր ամենամօտիկ ծանօթ-բարեկամ Յոհաննէս Շուշանեանցի տանը և գրտնում էր արժանավայել հիւրասիրութիւն տան տիրոջ և հասարակութեան կողմից:

(Շարունակելի).

Քաջբեռուցի